

կը նետէ Երուսաղէմի դէմ: Քարելիզիմը կը յիշատակուի Հընգամատեանին մէջ. Սամարացիները դէպ ի անոր կեցած կ'աղօթեն: Հոն կայ աղբււր մը՝ որուն այրը կը պատուեն եւ կ'այցելեն անոր ներսը, և այդ պատճառաւ է որ Նապլուսի մէջ շատ Սամարացիներ կը գտնուին»:

Տիմասքիին խօսքերն են. «Նապլուսը Սամարիոյ գաւառին մէջ կը գտնուի: Շատ բարեբեր եւ հաճելի քաղաք մ'է երկու լեռներու միջև ընդարձակօրէն շինուած: Ան ունի առատ վազուէն ջուր և ընտիր բաղնիքներ. նաեւ գեղեցիկ մզկիթ մը՝ ուր շարունակ գիշեր և ցերեկ Գուրան կը կարգացուի յատուկ մարդերու միջոցաւ: Քաղաքը կը նմանի պարտէզներով պալատի մը: Անոր ձիթենիներէն հանուած իւզը կը տարուի Եգիպտոս, Սիւրիա, Հիճալ և Արարիոյ անապատը: Նոյն իւզէն տարին հազար գանձարի չափ կը տարուի նաև Դամասկոս՝ Օմիատեան մզկիթին գործածութեան համար: Նոյն իւզէն կը շինեն նաև առաջնակարգ օշարակ, որ կ'արտածուի ուրիշ տեղեր և Միջերկրական կղզիները: Նապլուսի մէջ կ'աճի գեղնորակ սեխ մը՝ քաղցր քան ուրիշ տեղերունը: Հոն կան երկու լեռներ՝ որ կը կոչուին Ճէպէլը Զէյթա՝ որուն Սամարացիները ուխտի կ'երթան. հոն զօհ կը մատուցանեն, գառնուկներ կը մորթեն և կ'այրեն անոնց միսը: Հոն կան շատ Սամարացիներ ուրիշ տեղերէ աւելի: Կ'ըսուի թէ՛ երբ Իսլամ մը, Հրեայ մը, Սամարացի մը եւ Քրիստոնեայ մը ճանապարհի վրայ կը հանդիպին, Սամարացին նախամեծար կը համարի ընկերանալ իսլամին հետ»: Իպն Պաթութան արաբ աշխարհագիրը այցելած է հոն 1355ին (Տե՛ս «Palestine under the Moslems», էջ 512-14): Միւճիր էտ-տին կը գրէ թէ Նապլուսի գիտուններէն մին էր Ապո՛ւլ Ֆէզհ՝ Նասր իպն Իպրահիմ իպն Նասր էլ Մուզգատտէսի էն Նապլուսի, Շաֆիիդ, և հեղինակ բազմաթիւ գործերու. ան երկար ատեն Երուսաղէմ ընկած է. իր երկասիրութիւններն ասոնք են. Թահիյ, Քիրսայ կը քազրիյ, Քիրսայ կը Ֆոզուլ, Քիրսայ կը Քաֆի: Ան ունի նաև մեկնաբանական գրուածքներ: 1097ին մեռած է Դամասկոսի մէջ եւ թաղուած է Պապ-էս-Սաղիր (Տե՛ս թրգմ. Sauvairé, էջ 64-5):